ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԾ. Տ. ԱՐՇԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ 2023 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(փետրվար 20–24, 2024 թ.)

Վեհափա՛ռ Տեր,

Գերաշնորհ սրբազան հայրեր,

ԳՀԽ-ի պատվարժան անդամներ,

Այսու Ձեր ուշադրությանն է ներկայացվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2023 թ. գործունեության ամփոփ տեղեկագիրը, որը պատրաստված է Մայր Աթոռի բաժինների, թեմերի, հայրապետական պատվիրակությունների կողմից տրամադրված հաշվետվությունների հիման վրա։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու տարում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը պաշտոնական այցելությունների եւ ընդունելությունների շրջանակներում ունեցել է 100-ից ավելի հանդիպումներ եկեղեցական ու պետական բարձրաստիճան պատվիրակությունների, ազգային, հասարակական եւ մշակութային գործիչների հետ։ Առանձնացնենք այցելություններից եւ ընդունելություններից առավել հատկանշականները.

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունել է՝

հունվարի 29-ին՝ Բանակի օրվա առթիվ՝ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանին, ՀՀ ԶՈՒ բարձրագույն սպայական կազմի ներկայացուցիչներին, Մայր Աթոռի միաբաններին եւ ՀՀ ԶՈՒ

հոգեւոր առաջնորդ Հոգեշնորհ Տ. Մովսես վրդ. Սարգսյանին ու հոգեւոր առաջնորդության գնդերեցներին,

փետրվարի 21-ին՝ Եւրախորհրդարանի ֆրանսիացի պատգամավորներին, ԵԽ-ում Արցախի հետ բարեկամության խմբի համանախագահներ Սիլվի Գիյոմիին եւ Ֆրանսուա Ալֆոնսիին,

ապրիլի 24-ին՝ Ֆրանսիայի Սենատում Լեռնային Ղարաբաղի հարցով խմբի հիմնադիր եւ նախագահ, Արեւելքի քրիստոնյաների հարցով կապի խմբի նախագահ Բրունո Ռետայոյի գլխավորած պատվիրակությանը,

հուլիսի 12-ին՝ Վատիկանի պետքարտուղար կարդինալ Պետրո Պարոլինիին,

հոկտեմբերի 5-ին՝ Անգլիկան Եկեղեցու առաջնորդ, Քենթրբերիի արքեպիսկոպոս Նորին Սրբազնություն Ջասթին Ուելբիին,

նոյեմբերի 22-ին՝ Իրաքի Հանրապետության նախագահ Աբդ Ալ Լատիֆ Ջամալ Ռաշիդին։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելություն է կատարել՝

հունվարի 1-ին՝ «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հայրենիքի անկախության եւ պաշտպանության համար իրենց կյանքն ընծայաբերած հայորդիների հիշատակին,

հունվարի 29-ին՝ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի հայոց թեմ,

հունիսի 27-ին՝ Ծայրագույն Արեւելքի հայրապետական պատվիրակություն՝ մասնավորապես Հնդկաստան,

նոյեմբերի 2-ին՝ ուղեկցությամբ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների՝ Կոտայքի թեմի Ծաղկաձորի ճամբարում ապաստանած Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին։

ԱՐՑԱԽՅԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եկեղեցու առաքելության մեջ անցած տարում եւս առանցքային տեղ են ունեցել արցախահայության դեմ ադրբեջանական բռնազավթման եւ դրա հետեւանքների հաղթահարման ուղղությամբ իրականացված նախաձեռնություններն ու ծրագրերը։

2022 թվականի դեկտեմբերի 12-ից Արցախի նկատմամբ ամբողջական շրջափակման պայմաններում Մայր Աթոռի եւ թեմերի կողմից բարձրաձայնվել են Արցախի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության եւ Ադրբեջանի ցեղասպան գործողությունների հետեւանքով ստեղծված մարդասիրական սուր ճգնաժամի մասին։ Շրջափակման ամբողջ ընթացքում Մայր Աթոռի եւ թեմերի կողմից իրականացված հանգանակությունների շնորհիվ Արցախ են ուղարկվել մարդասիրական մեծաքանակ բեռներ։

2023 թ. սեպտեմբերի 19-ին եւ դրան հաջորդող ժամանակահատվածում Արցախի խաղաղ բնակիչների դեմ Ադրբեջանի ահաբեկչական ռազմական գործողությունների, Արցախի բռնազավթման, հայերի բռնի տեղահանման մասին Մայր Աթոռը դիվանագիտական, միջեկեղեցական ճանապարհներով շարունակել է ջանքեր գործադրել արցախահայության նկատմամբ Ադրբեջանի որդեգրած ցեղասպան գործողությունների դադարեցման, հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման, ինչպես նաեւ Ադրբեջանի կողմից գերեվարված մեր հայորդիների շուտափույթ վերադարձի ուղղությամբ։

Հիմք ընդունելով Ադրբեջանի կողմից Արցախում իրականացված ցեղասպան գործողությունների միջազգային դատապարտման կենսական հրամայականը՝ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության հանդեպ հայ ժողովրդի արդարացի իրավատիրությունը եւ միջազգային հարթակներում որպես արցախահայության լիազոր ներկայացուցիչ հանդես գալու անհրաժեշտությունը՝ որոշում է կայացվել պահպանել Արցախի թեմը։

Արցախահայության բռնի տեղահանումից հետո կազմակերպվել է տեղահանված արցախահայերի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Արագածոտնի եկեղեցապատկան շենքերում կացարաններով, սննդով եւ առաջին անհրաժեշտության իրերով ապահովումը։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ, ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ, ՈՒՂԵՐՁՆԵՐ ԵՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023 թ. հրապարակվել է հայրապետական 33 կոնդակ, որոնցից 2-ով շնորհվել են «Ս. Գրիգոր Լուսավորիչ», 6-ով՝ «Ս. Սահակ — Ս. Մեսրոպ», 20-ով՝ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշաններ։ Հայրապետական

3 կոնդակով շնորհվել է արքության պատիվ, հայրապետական 1-ական կոնդակ է հրապարակվել Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի վախճանման 850-րդ տարելիցի եւ ԱՄՆ հայոց արեւելյան թեմի հիմնադրման 125-րդ ամյակի առիթներով։

Շնորհվել է հայրապետական օրհնության 53 գիր։ Խոսքեր եւ ուղերձներ են հղվել ազգային եւ պետական տոների, միջեկեղեցական հանդիպումների եւ մի շարք միջոցառումների կապակցությամբ։

ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐ

2023 թ. ընկալյալ կարգով շարունակվել են հարաբերությունները Նվիրապետական Աթոռների հետ։

Նորին Սրբությունը պարբերաբար հաղորդակցության մեջ է եղել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հետ՝ քննարկելով սեպտեմբերյան ռազմական գործողությունների եւ արցախահայության տեղահանման հետեւանքով առաջացած ազգային կյանքը հուզող տարբեր հարցեր։

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության հետ հիմնական հաղորդակցությունը ծավալվել է «Կովերի պարտեզ» կալվածքի գործարքի առնչությամբ։ Վեհափառ Հայրապետն իր աջակցությունն է հայտնել Պատրիարքարանին կալվածքը հետ վերադարձնելու գործընթացում՝ թելադրելով այս առնչությամբ հնարավոր տեղեկատվություն տրամադրել Մայր Աթոռին։

Վեհափառ Հայրապետի ձեռամբ եպիսկոպոսական աստիճան է ստացել Պատրիարքության 2 միաբան՝ Թեոդորոս ծ. վրդ. Զաքարյանը եւ Կորյուն վրդ. Բաղդասարյանը։ Կարգավորվել են Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունում ուսանող սաների զինվորական ծառայության հետ կապված խնդիրները։ Տարբեր առիթներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել Սրբոց Հակոբյանց միաբանության անդամներ։

Անխափան շարունակվել է հաղորդակցությունը Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության հետ։ Կ. Պոլսի Պատրիարք Նորին Ամենապատվությունը նախորդ տարի փետրվարի 28-ից մարտի 2-ը մասնակցել է ԳՀԽ ժողովին։ Մայր Աթոռում իր ծառայությունն է շարունակում Պատրիարքության միաբան Հոգշ. Տ. Զատիկ վրդ. Պապիկյանը։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եկեղեցականության ընդհանուր թիվը 759 է, որից 27-ը՝ արքեպիսկոպոս, 25-ը՝ եպիսկոպոս, 5-ը՝ ծայրագույն վարդապետ, 45-ը՝ վարդապետ, 18-ը՝ աբեղա, 501-ը՝ քահանա, 124-ը՝ միաբան, եւ 14-ը՝ ճեմարանական սարկավագ։

2023 թ. եպիսկոպոսական աստիճանի են արժանացել 4 վարդապետ եւ 1 ծայրագույն վարդապետ։ Վարդապետական աստիճանի է արժանացել Հոգշ. Տ. Անանիա աբղ. Ծատուրյանը։ 14 քահանա արժանացել է լանջախաչ, 2-ը՝ ծաղկյա փիլոն կրելու իրավունքի, եւ 1-ը՝ ավագ քահանայության։ 3 սարկավագ կոչվել է քահանայության։

Տարբեր կարգազանցությունների պատճառով կարգալույծ է հռչակվել 6 քահանա, 1-ը՝ կուսակրոն, 5-ը՝ ամուսնացյալ, որոնցից 3-ը՝ իրենց դիմումի համաձայն։

Սարկավագական ձեռնադրություն է ստացել ճեմարանական 11 ուսանող։

Յավոք, հաշվետու տարում ի Տեր ննջեց Մայր Աթոռի երիցագույն միաբաններից Տարոն եպս. Ճերեճյանը։

Անհայտ կորած է համարվում Հոգշ. Տ. Մկրտիչ աբղ. Կարապետյանը։

Հաշվետու տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բաժիններում եւ ենթաբաժիններում աշխատել է 1027 անձ, որոնցից 695-ը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, իսկ 332-ը՝ հայորդյաց տներում։

ԵԿԵՂԵՑԻ–ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախորդ տարվա համեմատ այս տարի եւս որեւէ դրական զարգացում չի նկատվել Եկեղեցու եւ պետության հարաբերություններում։

Եկեղեցի–պետություն հարաբերությունների ներկա մակարդակը հիմնականում պայմանավորված է արցախյան ազատագրական պատերազմի հետեւանքով մեր ժողովրդի կյանքում ստեղծված խիստ տագնապալի իրավիճակով եւ առկա ծանր կացությունը հաղթահարելու ուղղությամբ իշխանության կողմից գործադրված անհամարժեք ջանքերի նկատմամբ Եկեղեցու որդեգրած քննադատական դիրքորոշումներով։

Երկրի առջեւ ծառացած գոյաբանական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ բացակայել են իշխանությունների կողմից տարրական իրազեկման ապահովումն ու ներդաշնակ գործակցությունն ինչպես Մայր Աթոռի, այնպես էլ ազգային-քաղաքական ազդեցիկ կառույցների հետ։

Պետական-ազգային տոներին Եկեղեցու եւ իշխանության բարձրագույն ներկայացուցիչների մասնակցությունը շարունակվել է իրականացվել առանձնաբար, իսկ եկեղեցական տոներին ու իրադարձություններին պետական բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցություն արձանագրված չէ։ Առաջընթաց չկա նաեւ Եկեղեցի—պետություն հարաբերությունների կանոնակարգման համար ստեղծված հանձնախմբի աշխատանքներում, ավելին՝ կրթական փոփոխությունների շրջանակներում իրականացված գործընթացները տեղի են ունենում Եկեղեցու կողմից անընդունելի ուղղությամբ։ Հիշյալ գործընթացների հետեւանքով արդեն իսկ քայլեր են արվել «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան մինչեւ 2026 թվականը հանրակրթական ծրագրերից ամբողջությամբ դուրս բերելու ուղղությամբ։ Միաժամանակ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ հրապարակ է իջեցվել «Հայոց պատմություն» առարկայի 7-րդ դասարանի դասագիրքը, որում խեղաթյուրված են մեր ժողովրդի պատմության առանցքային իրադարձությունները, անտեսված են ազգային կարեւորագույն խորհրդանիշներն ու հասկացությունները։

Հարկային-մաքսային ոլորտում եւս շարունակվում է Մայր Աթոռի կենսագործունեության հետ կապված գործարքների արհեստական ձգձգումների եւ խոչընդոտների գործելաոճը։

Այսուհանդերձ՝ պետության հետ հարաբերությունների բարելավումը եւ ի մասնավորի՝ հայրենի Արցախը կորցնելուց հետո Հայաստանում ստեղծված աղետալի իրավիճակի հաղթահարումը եւ կենսական նշանակության խնդիրների կարգավորումը Մայր Աթոռի համար շարունակում են մնալ օրակարգային հարցեր։

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարում եւս շարունակվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ քույր Եկեղեցիների, միջկրոնական տարբեր կազմակերպությունների միջեւ հարաբերությունները։

Նշենք դրանցից մի քանիսը՝

Հունվարի 30-ից փետրվարի 5-ը Կահիրեում (Եգիպտոս) անցկացվել է Արեւելյան Ուղղափառ-Կաթոլիկ միջեկեղեցական երկխոսության խառն աստվածաբանական հանձնախմբի հերթական՝ 19-րդ լիագումար նիստը։ Հանձնախմբին, որպես մշտական ներկայացուցիչներ, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ եւ տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից անդամակցել են Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամյանը եւ Գերշ. Տ. Աշոտ եպս. Մնացականյանը։

Հունիսի 15–20-ը Էստոնիայի մայրաքաղաք Տալինում անցկացված Եւրոպայի Եկեղեցիների կոնֆերանսի գագաթնաժողովին իր մասնակցությունն է բերել Հոգշ. Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը։

Օգոստոսի 26-ից սեպտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին է այցելել կաթոլիկ հինգ երիտասարդ հոգեւորական՝ իրենց երկու պատասխանատուների գլխավորությամբ։ Այցն ունեցել է ճանաչողական բնույթ եւ իրականացվել է Հռոմի Կաթոլիկ եւ Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների երկխոսության շրջանակներում՝ նպատակ ունենալով առավել նպաստել երկու եկեղեցական ընտանիքների երիտասարդ հոգեւորականների միջեւ կապերի սերտացմանը։

Սեպտեմբերի 18–21-ը Մայր Աթոռում հյուրընկալվել է ԵՀԽ պաշտոնական պատվիրակությունը՝ գլխավոր քարտուղար Վերապատվելի Դր. Ջերի Փիլլեյի գլխավորությամբ (ընդհանուր՝ 6 պատվիրակ)։

Հոկտեմբերի 4–7-ն ընկած ժամանակահատվածում Վեհափառ Հայրապետն ընդունել է Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջաստին Վելբին եւ նրան ուղեկցող պաշտոնական պատվիրակությանը (6 անձ)։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

2023 թ. Մայր Աթոռի հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատություններում ընդհանուր թվով ուսանել է 62 սան, որոնցից 14-ը՝ Գեւորգյան

հոգեւոր ճեմարանի մագիստրատուրայում, 43-ը՝ Սեւանի Վազգենյան դպրանոցի բակալավրիատում, եւ 5-ը՝ քահանայից պատրաստման եռամյա լսարանում։ ԳՀՃ-ում եւ ՍՎԴ-ում բնականոն կրթական գործընթացին զուգահեռ ընթերցվել են նաեւ դասախոսություններ, կազմակերպվել են սեմինար-հանդիպումներ Հայաստանից եւ արտերկրից ժամանած մասնագետների հետ։

2023 թվականի հոկտեմբերից վերսկսել է քահանաների վերապատրաստման ծրագիրը։ Ծրագրի շրջանակում Մայր Աթոռ է ժամանել 68 քահանա հայր։ Վերապատրաստման ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ Վեհափառ Հայրապետի եւ բարձրաստիճան հոգեւորականների հետ, կազմակերպվել են դասախոսություններ տարբեր ոլորտների մասնագետների ներգրավմամբ։

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում Մայր Աթոռի կողմից կրթական-դաստիարակչական գործունեությունն իրականացվել է հետեւյալ ուղղություններով՝

Հայորդյաց տներ

Մայր Աթոռի 7 հայորդյաց տները (Էջմիածին, Աշտարակ, Գյումրի, Վանաձոր քաղաքներում եւ Երեւանի Նոր Նորք, Մալաթիա եւ Արաբկիր վարչական շրջաններում) եւ մանրանկարչության արվեստի կենտրոնը նույնպես շարունակել են իրենց գործունեությունը հաշվետու տարում։ Այդ հաստատություններ հաճախող ավելի քան 2717 երեխա ու պատանի մասնակցել է բազմաբնույթ մեծ ու փոքր միջոցառումների, ցուցահանդեսների, մենահամերգների, հանդիսությունների, մրցույթների եւ այլ ծրագրերի։ Հաշվետու տարում Արցախից տեղահանված ընտանիքների երեխաներն անվճար հիմունքներով հաճախել են հայորդյաց տներ։

Հանրակրթական դպրոցներ

Ինչպես գիտեք, հանրակրթական ոլորտում պետությունը շարունակում է «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի՝ դասավանդման ծրագրերից դուրս մղման քաղաքականությունը, ինչը լրջագույն խնդիր է

Հայ Եկեղեցու համար։ Ներկայումս առարկան դասավանդվում է 6-րդ, 8-րդ, 9-ից 11-րդ դասարաններում, իսկ 2026 թվականից «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան ամբողջությամբ դուրս է գալու ուսումնական ծրագրից։

ՔԴԿ գրասենյակի միջոցով Մայր Աթոռ է այցելել 1366 աշակերտ Հայաստանի տարբեր մարզերից։

Մայր Աթոռի ֆինանսավորմամբ տպագրվել են ՀԵՊ-ի 2—4-րդ դասարանների գիրք-տետրերը՝ ՀՀ 45 դպրոցի համար։

Մայր Աթոռի հովանու ներքո գործող կրթական հաստատություններ

«Էօրնեկեան հանրակրթական դպրոց»-ի 31 դասարաններում հաշվետու տարում ուսանել է 460 աշակերտ, որոնք աշխուժորեն մասնակցել են ներդպրոցական, քաղաքային, մարզային եւ հանրապետական օլիմպիադաներին։ 34 շրջանավարտներից ՀՀ առաջատար բուհեր են ընդունվել 33-ը։ «Էօրնեկեան մանկապարտեզ» է հաճախել 2,5—5 տարեկան 45 երեխա։

Մայր Աթոռի կառավարմանը հանձնված Երեւանի Գեւորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոցում ուսումնական գործընթացը եղել է սահմանված կարգով։

Հառիճի Թրբանճյան ընծայարանի 3 դասարաններում ուսումնառություն է ստացել 19 աշակերտ։ 2023 թվականին ընծայարանն ավարտած 3 սաներից 2-ն ընդունվել են Գեւորգյան հոգեւոր ճեմարան, իսկ 1-ը՝ Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան։

Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանում եւ Դավթյան օրիորդաց վարժարանում ուսանել է 48 աշակերտ, որոնցից 35-ը՝ Հայաստանից, 5-ը՝ ՌԴ-ից, 4-ը՝ Իրաքից, 2-ը՝ Իրանից, 1-ը՝ Հնդկաստանից, եւ 1-ը՝ Մյանմարից։

ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Անցյալ տարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական գործունեությունը ծավալվել է հետեւյալ ուղղություններով.

Քարոզչական կենտրոն

Մայր Աթոռի եւ թեմերի հոգեւոր քարոզչական գործունեության զարգացմանը նպաստելու նպատակով Քարոզչական կենտրոնը 2023 թվականի ընթացքում հանդիպումներ է կազմակերպել հանրակրթական մի շարք հաստատությունների աշակերտների հետ, այցելություններ կատարել սահմանամերձ համայնքներ։ Իրականացվել է քարոզչական գործունեություն Տավուշի եւ Գեղարքունյաց մարզերում, հանդիպումներ են անցկացվել ՀՀ ԶՈՒ զոհված, վիրավորված զինծառայողների եւ բազմազավակ ընտանիքների հետ։ Հոգեւոր մեծաքանակ գրականություն է բաժանվել գյուղական համայնքներում եւ Արցախից տեղահանված հավատացյալներին։

Հրատարակություններ

Հաշվետու տարում Մայր Աթոռում տպագրվել է եկեղեցագիտական, հայագիտական, մեկնողական եւ բարոյագիտական բովանդակության 17 անուն գիրք, ինչպես նաեւ իրականացվել են օտար լեզուներից եւ գրաբարից թարգմանություններ։ Հրատարակվել են «Էջմիածին» ամսագիրը եւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը։

ՀՀ Զինված ուժեր

Բանակի հոգեւոր առաջնորդությունը շարունակել է հոգեխնամ գործունեությունը, որի շրջանակներում հաշվետու տարում տեղի է ունեցել 694 հանդիպում զինծառայողների ընտանիքների հետ, 533 հանդիպում՝ վիրավոր, զոհված կամ անհետ կորած համարվող զինծառայողների ընտանիքների հետ։ Նշված տարում Հայոց բանակում ծառայել է 56 եկեղեցական (1 վարդապետ, 15 քահանա եւ 40 սարկավագ)։

Քարոզչություն երիտասարդների շրջանում

Հաշվետու տարում շարունակվել է քարոզչությունը երիտասարդների շրջանում ՀԵՀԵՄ-ի եւ երիտասարդական թեմական միությունների միջոցով։ Կազմակերպել են տարբեր գիտաժողովներ եւ միջոցառումներ, թեմերի եւ եկեղեցական կառույցների հետ քննարկվել են ծրագրեր, լուսաբանվել է թեմերի եւ եկեղեցական երիտասարդական կառույցների

գործունեությունը։ 2023 թվականի հուլիս ամսին կազմակերպվել է «Սուրբ էջմիածինը մեր հավատքի ծննդավայր» ՀԵՀԵՄ-ի համահայկական ուխտագնացությունը՝ աշխարհասփյուռ թեմերի ավելի քան 160 երիտասարդի մասնակցությամբ։

Քրեակատարողական հիմնարկներ (ՔԿՀ)

2023 թ. 10 ՔԿՀ-ներում սպասավորող 9 հոգեւորական (1 վարդապետ եւ 8 քահանա) շարունակել է հոգեւոր խնամք ցուցաբերել ազատազրկվածներին, նրանց ընտանիքներին եւ նախկին դատապարտյալներին։ Հիմնարկներում անցկացվել են հանդիպումներ, Աստվածաշնչի սերտողություններ, առանձնազրույցներ եւ ծիսական արարողություններ՝ սուրբ պատարագ, մկրտություն, հոգեհանգիստ, ջրօրհնեք եւ խաղողօրհնեք։ Մայր Աթոռն ազատազրկվածներին տրամադրել է աղոթագրքեր եւ հոգեւոր գրականություն։ Աշխատանքներ են տարվել նաեւ ՔԿ վարչության հիմնարկների աշխատակիցների հետ։

Հանրային քարոզչություն

Մայր Աթոռը հանրային քարոզչություն է իրականացրել է հեռուստահաղորդումների, համացանցային հրապարակումների, Մայր Աթոռի թանգարանների միջոցով։

Հաշվետու տարում կանոնավոր կերպով շարունակվել է «Շողակաթ» հեռուստաընկերության հեռարձակումը՝ հանրությանը ներկայացնելով հոգեւոր, մշակութային, հասարակական, կրթական ու մանկական հաղորդաշարեր։

Մայր Աթոռի թանգարաններում այցելուները ծանոթացել են եկեղեցական սպասքի ու հանդերձանքի պարագաների, սրբություններ, արվեստի բարձրարժեք գործերի, հայկական ազգային ու մշակութային ժառանգության բազմաթիվ նմուշների հետ։ Անցյալ տարի թանգարաններ է այցելել 40 095 անձ։ Այդ թվի մեջ ընդգրկված չեն Մայր Աթոռի պաշտոնական պատվիրակությունները, հյուրերը, զինվորականները, անվճար հիմունքով այցելուները։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023 թվականի ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իրականացրել է դրամական, իրային, սննդային, առողջաբանական պարագաների, բժշկական աջակցության եւ այլ բնույթի մի շարք սոցիալական ծրագրեր։ Ընդհանուր առմամբ սոցիալական խնդիրների լուծման համար Մայր Աթոռը տրամադրել է 911 000 000 ՀՀ դրամ արժողությամբ միջոցներ, որոնք օգտագործվել են սոցիալական մի շարք ծրագրերի շրջանակներում։ Առանձնացնենք առավել հատկանշականները։

Հիշյալ միջոցներից դրամական օգնություն է տրամադրվել 2020 թվականի 44-օրյա պատերազմից մինչեւ հաշվետու ժամանակաշրջանը Ադրբեջանի ռազմական գործողությունների հետեւանքով զոհված զինծառայողների եւ Արցախից բռնի տեղահանված բազմազավակ եւ կարիքավոր ընտանիքներին։

Սննդի եւ իրային աջակցություն է տրամադրվել շրջափակման մեջ գտնվող Արցախի բնակիչներին։

Մայր Աթոռի բարեգործական ճաշարանները ամենօրյա սննդով ապահովել են կարիքավոր անձանց։

Բժշկական աջակցության շրջանակներում Իզմիրլյան բժշկական կենտրոնն իրականացրել է կարիքավորներին աջակցելու 4 ծրագիր, որոնց շրջանակներում օգնություն է ցուցաբերվել 44-օրյա պատերազմի մասնակիցներին, Սիրիայից փախստականներին, Զինվորի տուն բարեգործական-հասարակական կազմակերպությունում բուժում ստացող հաշմանդամ զինվորականներին եւ Արցախից փախստականներին։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԱՆՔԵՐ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անմիջական ենթակայության ներքո են գործում Մայր Աթոռի Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես մատուռ-մկրտարանը, Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցին, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ, Ս. Գեղարդի, Խորվիրապի եւ Սեւանա վանքերը։ Եկեղեցական հիշյալ կառույցներում 2023 թ. կատարվել են 8668 մկրտություն եւ 2006 պսակադրություն։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործում են 35 թեմ եւ հայրապետական 4 պատվիրակություն։ Համաձայն թեմերի եւ հայրապետական պատվիրակությունների կողմից ներկայացված հաշվետվությունների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության կանոնական տարածքներում գործում են 758 եկեղեցի ու վանք, 743 ծուխ եւ ծխական առաքելություն, կիրակնօրյա 329 դպրոց, տիկնանց 164 եւ երիտասարդաց 234 միություն։ Անցած տարում կատարվել է 42 652 մկրտության եւ 10 661 պսակադրության արարողություն։

Հաշվետու տարում թեմերում ու եկեղեցական կառույցներում շարունակվել է հոգեւոր-քարոզչական, սոցիալական, կրթամշակութային բազմաբնույթ ծրագրերի իրականացումը։ Հոգեւոր սպասավորներն այցելել են մանկախնամ եւ ծերախնամ կենտրոններ, դպրոցներ, հիվանդանոցներ, քրեակատարողական հիմնարկներ։

Եկեղեցիներում կազմակերպել են Ս. Գրքի սերտողություններ, կրթադաստիարակչական կենտրոններում՝ դասախոսություններ, գիտաժողովներ, եկեղեցասիրաց երիտասարդաց միությունների հավաքներ, դպրոցական եւ համալսարանական միջոցառումներ ու հոգեւոր բովանդակությամբ մրցույթներ։ Հրատարակվել են գրքեր ու քարոզթերթիկներ։ Հեռուստառադիոալիքներով հեռարձակվել են հոգեւոր բովանդակությամբ հաղորդաշարեր, լույս են ընծայվել պաշտոնական թերթեր։